ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«02» փետրվարի 2017թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ
_____ Մ. Անանյան

ԳԲԽ-02/17 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ուսումնասիրելով «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից 16.01.2017թ. ներկայացված բողոքն, ինչպես նաև վերոնշյալ ընկերության կողմից ներկայացված բողոքն առանց քննության թողնելու մասին 02.02.2017թ. գրությունը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումներն և պահանջն.**

«Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 16.01.2017թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է «Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից դեղորայքի, պատվաստանյութերի և ԲՆԱ-ի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԳՊ-ՇՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով

շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Բողոքաբերը նշել է, որ Պատվիրատուի կողմից «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ի հայտի մերժումն անհիմն է, քանի որ «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ն ներառված չէ գնումների ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, հղում է կատարել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի և 27-րդ հոդվածի դրույթներին և խնդրել է դադարեցնել (վերացնել) «ԳՊ-ՇՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.12.2016թ. թիվ 2 արձանագրությամբ ընդունված որոշումն:

Ընկերության կողմից բերված բողոքում նշված է նաև, որ «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ի դիմումով իրեն ուղարկված թիվ 2 արձանագրությունն ունի բազմաթիվ տարբերություններ և անհամապատասխանություններ www.gnumner.am կայքում տեղադրված նույն արձանագրության հետ:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում ԳԲԽ-02/17 ծածկագրով բողոքի քննման շրջանակներում 20.01.2017թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած նիստին «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ի ներկայացուցիչները պնդեցին բողոքով ներկայացված դիրքորոշումը, հայտնելով, որ խախտվել է Ընկերության գնման ընթացակարգին մասնակցելու օրենքով սահմանված իրավունքը՝ ներկայացված հայտը Պատվիրատուի կողմից վերադարձվել է և չի բացվել: «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ի հայտը ենթակա չէր մերժման, քանի որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերությունը ներառված է եղել գնումների գործընթացին մասնակցելու իրավունքը սահմանափակված մասնակիցների ցանկում, և ոչ թէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում:

Գնումների բողոքրկման խորհրդին ներկայացված 02.02.2017թ. գրությամբ Ընկերությունը խնդրել է առանց քննության թողնել 16.01.2017թ. ներկայացված բողոքը:

2. «Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումներն և դիրքորոշումն.

Կենտրոնը Պատվիրատուին ուղղված 18.01.2017թ. թիվ 01/04.1/113-17 գրությամբ խնդրել է եռօրյա ժամկետում ներկայացնել Ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և տալ կարծիք:

Պատվիրատուն վերոնշյալ գրությանը չի պատասխանել:

Կենտրոնում ԳԲԽ-02/17 բողոքը քննող հանձնաժողովի 20.01.2017թ. ժամը 17:00-ին տեղի ունեցած նիստին Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ Ընկերության կողմից ներկայացված հայտի վերադարձման և Ընթացակարգին հետագա մասնակցության դադարեցման հիմք է հանդիսացել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտումներ թույլ տված մասնակիցների ցանկը:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց նաև, որ Ընկերության կողմից նշված արձանագրությունների անհամապատասխանությունը վրիպանքի արդյունք է, որը հետագայում շտկվել է, այնուհետև հրապարակվել է gnumner.am կայքում:

<u>3. ԳԲԽ-02/17 ծածկագրով բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումներն և եզրահանգումն.</u>

Ընկերությունը 16.01.2017թ. գնումների բողոքարկման խորհրդին է ներկայացրել բողոք, իսկ 02.02.2017թ. գրությամբ խնդրել է այն առանց քննության թողնել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք «Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԳՊ-ՇՀԱՊՁԲ-17/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.12.2016թ. թիվ 2 արձանագրությունն դադարեցնելու մասին «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ի կողմից 16.01.2017թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետի տեղակալ

Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար մասնագետ,
ԳԲԽ-02/17 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար Լ. Սահակյան